# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՁՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

11-ը օգոստոսի 2021 թ. N 228
Նոր Հաճն

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Սամվել Համբարձումի, Վահրամ Սամվելի, Անի Սամվելի Դանիելյաններին և Լյուբա Հայկի Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 2441113/ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ 0.056 հա մակերեսով հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Հարավարևելյան թաղամաս, 9-րդ փողոց թիվ 13 հասցե:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 229**

11-ը Օգոստոս 2021թ.
Ք. Նոր Հաճն

**ՍՓՅՈՒՌՔԻՑ ԺԱՄԱՆԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Օգոստոսի 12-ի՝ Հայաստան ժամանած ՓԱՐՈՍ ամերիկյան հիմնադրամի գործադիր տնօրեն Պիտեր Աբաջյանին, հիմնադրամի աշխատակիցներին և սփյուռքի հաճընցիներին բարձր մակարդակով ընդունելությունը կազմակերպման ինչպես նաև Պիտեր Աբաջյանին Հաճընի հերոսմարտի 100 ամյակին նվիրված N16 հուշամեդալով պարգևատրման համար համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4237 <Ներկայացուցչական ծախսեր> հոդվածից հատկացնել 67320 դրամ:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, Ա.Սմբատյանին ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ.Սիմոնյանի վրա:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

11.08.2021թ
Ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ №230

13-ը օգոստոսի 2021թ.
ք. Նոր Հաճն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արամ Սաֆարյան ԱՁ-ն* դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Տոռոզյան 43 հասցեում գտնվող հիմնական շինության ներսում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ ըստ 9510 անդորրագրի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի №47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդհոդվածի 1-ին մասի 9-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Տալ *Արամ Սաֆարյան ԱՁ-ին* (վկայական 80.1180962) Նոր Հաճն համայնքի Տոռոզյան 43 հասցեի տարածքում գտնվող հիմնական շինության ներսում տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելու թույլտվություն 2021 թվականի համար:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ.Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը օգոստոսի 2021 թ. N 230/1
Նոր Հաճն

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Վանիկ Ռանակյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 1985791/ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 07-006-0047-0002 կադաստրային ծածկագրով՝ 0.1830 հա մակերեսով հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 1-ին թաղամաս, 2-րդ փողոց թիվ 9 հասցե:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13-ը օգոստոսի 2021 թ. N 231

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման , 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել փոփոխելու Սոֆյա Ֆիրդուսի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Սպանդարյան փողոցի թիվ 1/3 հասցեի, 07-006-0011-0067 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.0044 հա մակերեսով բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը՝ որպես հասարակական կառուցապատման հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոֆյա Ֆիրդուսի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՐՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ №232

17-ը օգոստոսի 2021թ
Ք. Նոր Հաճն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Աշոտ Հովհաննիսյան ԱՁ-ն* դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 16/50 հասցեում գտնվող 21ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ 9543 վճարման հանձնրարագրի դիմումատուն 2021 թվականի II կիսամյակի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Աշոտ Հովհաննիսյան ԱՁ-ին* (վկայական 58.904359) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 16/50 հասցեում գտնվող 21ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն 2021 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ.Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ